

**Սոցիալական փաթեթի հաշիվ  
Տեղեկատվական ամփոփագիր***թարմացվել է 13.11.2018թ.*

Սոցիալական փաթեթը սոցիալական փաթեթի շահառու (այսուհետ՝ Շահառու) հանդիսացող անձանց և/կամ նրանց անմիջական ընտանիքների անդամների\* առողջական, կրթական և այլ խնդիրների ապահովման կամ ընտրական միջոցառումների համախումբ է՝ աշխատողների մոտիվացման և աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով:

Սոցիալական փաթեթի հաշիվը «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ) Շահառուի կողմից բացվող հատուկ հաշիվ է, որին փոխանցվում է սոցիալական փաթեթի համար հատկացվող գումարը:

Շահառու են հանդիսանում ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1691-Ն որոշմամբ սահմանված սոցիալական փաթեթից օգտվելու իրավունք ունեցող անձինք:

**Սոցիալական փաթեթի ծառայություններ**

- I. Հանգստի ապահովում Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում**
  - II. Հիփոթեքային վարկի ամսական վճարի մարում**
  - III. Ուսման վճար**
  - IV. Շահառուի առողջության ապահովագրության լրացուցիչ ծառայությունների նվազագույն փաթեթի և/կամ Շահառուի ընտանիքի անդամի առողջության ապահովագրության նվազագույն բազային փաթեթի ձեռքբերում**
- 
- I. Հանգստի ապահովում Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում**

Հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկվում են ՀՀ-ում և ԼՂՀ-ում գրանցված՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից՝ սահմանված կարգով հաշվառված զբոսաշրջային օպերատորները, որոնց ցանկը հրապարակված է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում՝ [www.mineconomy.am/arm/20/text.html](http://www.mineconomy.am/arm/20/text.html)

**II. Հիփոթեքային վարկի ամսական վճարի մարում**

Տվյալ ծառայությունն ընտրած Շահառուն իրավունք ունի օգտվելու հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման ծառայությունից, եթե Շահառուի հիփոթեքային վարկի պայմանները համապատասխանում են «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորող վարկային կազմակերպություն» ՓԲԸ կամ «Արցախի ներդրումային հիմնադրամ»-ի կողմից վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի ընդհանուր պայմաններին, ընդ որում, պարտադիր չէ հիփոթեքային վարկը վերաֆինանսավորված կամ տրամադրված լինի վերջիններիս ֆինանսական միջոցներից:

Շահառուն իրավունք ունի օգտվելու հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման ծառայությունից նույնիսկ այն դեպքում, երբ նա կամ նրա անմիջական ընտանիքի անդամը

---

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք, Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ/ցանկացած մասնաճյուղ կամ գանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով:

\* Շահառուի ամուսինը, մինչև 27 տարեկան զավակ/ներ/ը

հիփոթեքային վարկը ստացել է նախքան ՀՀ 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1691-Ն որոշումն ուժի մեջ մտնելը:

**III. Ուսման վճար**

Ներառվում են ՀՀ և ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունները, վերջիններիս ցանկը հրապարակված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կայքում՝ <http://www.edu.am/index.php?menu1=489&arch=0>

Ուսման վճարի ծառայությունից կարող են օգտվել Շահառուն և նրա անմիջական ընտանիքի անդամները:

**IV. Շահառուի առողջության ապահովագրության լրացուցիչ ծառայությունների նվազագույն փաթեթի և/կամ Շահառուի ընտանիքի անդամի առողջության ապահովագրության նվազագույն բազային փաթեթի ձեռքբերում**

Շահառուն հնարավորություն ունի իր ցանկությամբ ընտրելու ցանկացած ապահովագրական ընկերություն, որը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ստացել է պետական գրանցում և առողջության ապահովագրության դասի գործունեության իրականացման լիցենզիա:

Շահառուն կարող է ընտրել ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող առողջության ապահովագրության ցանկացած փաթեթ, որի պայմաններն առնվազն պետք է բավարարեն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշմամբ սահմանված փաթեթների պահանջները՝ **անհրաժեշտության դեպքում լրավճարելով տարբերությունը:**

Ապահովագրական ընկերությունների ցանկը, ինչպես նաև այդ ընկերությունների կողմից առաջարկվող առողջության ապահովագրության փաթեթների օրինակելի ձևերը՝ ՀՀ առողջապահության նախարարության դրական եզրակացությամբ հաստատվելուց հետո հրապարակվում են ՀՀ առողջապահության նախարարության կայքում՝

[http://moh.am/?section=static\\_pages/index&id=628&subID=57](http://moh.am/?section=static_pages/index&id=628&subID=57)

**Սակագները**

Հաշվի բացում	0 ՀՀ դրամ
Հաշվի տեղեկանքի տրամադրում	0 ՀՀ դրամ
Հաշվի սպասարկում	0 ՀՀ դրամ
Հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք	3% տարեկան
Հաշվից կանխիկ դրամի տրամադրում	0 ՀՀ դրամ
Փոխանցումների իրականացում	0 ՀՀ դրամ
Հաշվի փակում	0 ՀՀ դրամ

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը՝ 3%

## Սոցիալական փաթեթի հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

- Անձը հաստատող փաստաթուղթ
- Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չստանալու մասին տեղեկանք

Սոցիալական փաթեթի հաշվի բացման [նիւմուշի ձևը](#) կարող եք գտնել [www.conversebank.am](http://www.conversebank.am) կայքում:

## Սոցիալական փաթեթի հաշվից փոխանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը

1. Կանխավճարի փոխանցման հաշիվ կամ տեղեկանք (այդ թվում՝ ապահովագրական ընկերության կողմից տրամադրված առողջության ապահովագրության վկայագիր), որտեղ արտացոլված են ծառայությունը մատուցող կազմակերպության վավերապայմանները և ծառայությունը ստացող ֆիզիկական անձի տվյալները (անունը, ազգանունը, բնակության վայրը, քաղաքացիությունը, նույնականացման քարտի տվյալները՝ օրինակ՝ համարը, վավերականության ժամկետը, ում կողմից է տրված), ծառայության տեսակը և փոխանցման նպատակը
2. Հաշիվ – ապրանքագիր
3. Շահառուի ամուսնու կամ զավակի՝ սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու դեպքում գումարի փոխանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր են համարվում ամուսնության վկայականը և/կամ զավակի ծննդյան վկայականը
4. Սոցիալական փաթեթի հաշիվը փոխելու դեպքում՝ հաշիվը սպասարկող նոր բանկի կողմից տրված սոցիալական փաթեթի հաշվի մասին տեղեկանք
5. Հանգստի ապահովման ծառայությունից օգտվելու դեպքում Շահառուն 1 կամ 2 կետերով նախատեսված փաստաթուղթը, իսկ Շահառուի ընտանիքի անդամի՝ սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու դեպքում՝ նաև 3 կետով նախատեսված փաստաթուղթը, Բանկ է ներկայացնում մինչև այդ ծառայությունից օգտվելը կամ ոչ ուշ, քան այդ ծառայությունից օգտվելուց հետո 15 օրվա ընթացքում
6. Հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման ծառայությունից օգտվելու դեպքում Շահառուն ներկայացնում է «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորող վարկային կազմակերպություն» ՓԲԸ կամ «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորվող վարկային կազմակերպություն» ՓԲԸ կամ «Արցախի ներդրումային հիմնադրամ»-ի կողմից սահմանված վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի ընդհանուր պայմանների համապատասխանության մասին տեղեկանքը, եթե աշխատողի հիփոթեքային վարկը տրամադրված չէ սոցիալական փաթեթի հաշիվը սպասարկող առևտրային բանկի կողմից

**Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների եվ կարգի մասին**

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Յիմնադրամ):

Ավանդի արժուքային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		10 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժուքային ավանդ		5 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավելի է	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժուքային ավանդը՝ 5 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

**Յիմնադրամի գտնվելու վայրը՝ ՀՀ կենտրոնական բանկ /ք. Երևան, Վ. Սարգսյան 6, հեռ. (+37410) 58-35-14, (+37410) 59-26-64/:**

**Ծանուցում ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ**

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

**Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15**

**«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ**

**Հեռախոս՝ (+ 37460) 70 11 11**

**Ֆաքս՝ (+ 37410) 58 24 21**

**Էլ. հասցե՝ info@fsm.am**